



## ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

### ՄՐԱՌՅԱՄԱՔ ՊԱՀՊԱՆԵՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԵՐ ԱՎԱՆԴՆԵՐԸ



Երջես Մայր Հայրենիք այցելած  
բազիկացի գրող ժամե Աղոստ  
դա Կամարան, խորհրդածելով  
Սովետական Հայաստանից ստա-  
ցած իր տպավորությունների վրա, հատկա-  
նշական մի զուգակշիռ է անցկացրել հայ և  
հույն ժողովուրդների անցյալում ստեղծած  
մշակութային ավանդների և նարտարապե-  
տական հուշարձանների պահպանության  
վերաբերյալ. «Հայերն ունեն մշակութային  
նույնական ավանդներ, ինչպես նույները.  
տարբերությունն այն է, որ հույններն այդ  
ավանդները պահպանել են ավերակների մէջ,  
իսկ հայերը հասցել են մինչև մեր օրերը»:

Արդարե, մեր Հայրենի հողը հայ նարտա-  
րապետության գոհարեներով հարուստ, բա-  
զոյա մի բանգարան է, հոյակապ կորող-  
ների, պատմական հուշարձանների, տաճա-  
ռերի և խաչքարերի մի սուրբ աշխարհ, որ-  
տեղ յուրաքանչյուր բարի, ժայռի վրա նա-  
վերժացել է հայ շինարար ժողովրդի հանճա-  
րը, մեր կառուցող վարպետների տաղանդը  
և մեր բարտաշների մատների շնորհին ու  
նարտարությունը:

Պատմական այս հուշարձանների զիսով  
անցել են ժամանակի փորորիկները, բնա-  
կան և բաղաբական ավերածությունների  
մշրիկները: Այդ հուշարձանների մի մասը  
վերածվել է ավերակների, բայց շատերն էլ  
մնացել են կանոնին արհամարենիլով արհա-  
միրներն ու ժամանակը, որպես լուս վկա-  
ները հայ ժողովրդի շինարարական տաղան-  
դի և նարտար աշխատանքի:

Հայաստանում հնագույն նարտարապե-  
տական կորողը Դատիկի հայկական բազ-

վորական ամրոց-մեհյանն է, կառուցված  
մեր բվարկությունից առաջ առաջին դարում:  
Դատիկի ավերակների նուրբ խոյակներն ու  
զարդարակները վկայում են նարտարա-  
պետական արվեստի բարձր զարգացումը  
Հայաստանում:

Բուն հայկական նարտարապետությունը,  
սակայն, զարգացման իննուրույն, բարձր  
մակարդակի է հասնում է—ԺԴԴ դաշեցրամ,  
ուրատական կառուցողական արվեստի հիմ-  
ների վրա, որից նետո բան Հայաստանում  
համարյա նոր բան չի ստեղծվում և մեր երկ-  
րամ չենք հանդիպում հայ արվեստի մեա-  
յուն նոր գործերի: Է դարում է, որ իր վերջ-  
նական ձևն ու բազմադակությունն է ստա-  
նում հայ նարտարապետությունը: Մեռն է  
առնում և իր կասարելության հասնում հայ  
նարտարապետական ոճը:

ԺԴԴ դաշեցրամ հետո, մեր ժողովրդի  
բաղաբական կյանքի դժբախտ պայմաննե-  
րում, ժիշ անգամներ կատարվել են լուրջ  
և հիմնական վերանորոգումներ նարտարա-  
պետական այդ հուշարձանների, պատմական  
տաճառների և սրբավայրերի վրա:

Այսուամենայնիվ, այստեղ երախտագի-  
տությամբ պետք է հիշատակենք անունները  
Փիլիպոս Աղքակեցի, Հակոբ Զուլայեցի,  
Եղիազար Այնքապցի, Սիմեոն Երևանցի,  
Ղուկաս Կարենցի հայրապետների, որոնք,  
առավել կամ նվազ շափով, կատարել են վե-  
րակառուցումներ մեր մի շարք պատմական  
հուշարձանների վրա, երբեմն նույնիսկ նոր  
մասեր կառուցելով նրանց վրա:

Այսպես, օրինակ, Մայր Տաճարի զանգա-  
կատան շինությունն սկսում է Փիլիպոս Աղ-

քակեցին, այն ավարտում է Հակոբ Զավալցին: Եղիազար Ալեքսանդրի կարաղիկասի անվան հետ է կապված Մայր Տանարի փոքր կարաղիկեների շինությունը: Փրիլառու, Հակոբ և Եղիազար կարաղիկոսները, բայ Առավանցու «Համբ»-ի վկայության, կատարել են վերանորգման աշխատանքներ Ա. Հոփիսիմեի և Ս. Դայանիկի վաճառքառությունը: Ա. Հոփիսիմեի զանգակատան շինությունը եղել է Պուկաս Կարանցու օրով, ինչպես վկայում է զանգակատան արձանագրությունը:

Շինարարական այելի փոքր աշխատանքներ կատարել են մեր պատմական հուշարձանների վրա նաև այլ հայրապետաներ:

Սակայն, հետագա շրջաններում, մասնակեան մեր օրերից առաջ 100—150 տարիների ընթացքում, բվում է, թե Մայր Արքորչի կարաղացել գրալվել հարտարապետական կորող մեր հին վանքերի և եկեղեցիների վերանորգության աշխատանքներով: Այդ պատճենով է, որ այդ ժամանակաշրջաններում պատմական մեր հայտնի սրբավայրերը և հայ հարտարապետության գոհար հմուտները, ինչպիսիք են Ս. Հոփիսիմեն, Ս. Գայանեն, Ս. Շողակարը, Ս. Գեղարդը, Սահմանին ու Հաղբատը, Հաղպարծին ու Հանին, Սևանին ու Հաղբարը ընկանակաները և տասնյակ այլ հոյակապ հուշարձաններ, մեացել են համարյա անմիտիքա վիճակում: Ավելի ծանր հոգսեր կարծեք վերջին 100—150 տարիների ընթացքում պատճառ են դարձել, որ հայ հարտարապետության հարազատ ոնի և պատմական կորողների նկատմամբ նվազի մասնակր գեանատանքը և դրանք պահելու և պահպանելու գործութանքը:

Ավելին, այդ ժամանականներում, մեր մի շարք պատմական կորողները փոքր երազությունների ենթարկելիս, դժբախտաբար կատարվել են նույնիսկ սխալներ, հայ հարտարապետական ոնք հարազատարյամբ պահպանելու մտանոգության պակասի հետևանդունքում: Այսպիսի սխալները առաջանաւ են առ շուրջ 70—80 տարի առաջ, տաճարի մասնակի հարցումների առիվի: Պատմական տաճարի հարտարապետական ընթանութ կառուցվածին բոլորովին անհամապատասխան ոնզ կառուցվել է ուր սեղան, իսկ տաճարը ներսից ամբողջովին ծեփվել է գաշով, լրիվ խաթարելով այդ գոհար եկեղեցու հարտարապետական ներքին նշմարիս գեղեցկությունը: Նույն սխալները կատարվել են նաև Ս. Գայանենի վաճենում, մասնակի վերանորգումների ժամանակի, համարյա նույն ժամանակներում:

Միիրարական է սակայն հաստատել, թե վերջին տասնամյակներում արտասահմանի մեջ կառուցված հայկական մի շարք եկեղեցիներ, արդարացիորեն կրում են հայ եկեղեցական հարտարապետության հին ոնի ազգեցույթումը, օրինակ՝ Կամիրելի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Անքարիկանի կարաղիկառանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տանարը, Թոփարեսանի հայոց Ս. Հռչակապետաց եկեղեցին, Փարիզի և Լոնդոնի հայոց եկեղեցիները:

Նոյնպես ուրախայի է արձանագրել, որ վերջերս հայկական ոնի պահպանմամբ կառուցվեցին Միլանոյի, Բուտոնի հայոց եկեղեցիները, ինչպես նաև հայկական ոնով պետք է կառուցվեն նյու-Յորքի հայոց Մայր եկեղեցին և Մոնտեվիդեոյի հայոց նոր եկեղեցին, որի հիմնարկելքը կատարել է Վեհապահ Հայրապետը 1960 թվականի սեպտեմբերին, երբ այցելությամբ զտնվում է այնպես:

Մեր օրերին, հայրենի վերածննդյան նոր պայմաններում, հետզինեած ամրանում է և խորանում ազգային, հարազատ, նին ոնք պահպանելու և վերականգնելու պայծառ գիտակցությունը: Արդարե, որքան նշմարիս է այն միտքը, ըստ որի ոնք ինքը ժողովուրդն է, որպես ուլյալ ժողովրդի անհատականությունը և հանենարը նշող արժեք: Անս այս բարձր ըմբռնումով են առաջնարդում մեր Հայրենիքում արվեստի մարդիկ և մասնավանդ հայ հարտարապետները ընդհանրապես և Հայաստանի Պատմական հուշարձանների պահպանության պետական կոմիտեն հատկապես:

Այսօր, մեր Հայրենի բարեխնամ կառավարությունը, Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի միջոցով, մեծ զուգարակեալ պահպանում է մեր պատմական կորողները և նորոգում դրանցից շատերը: Մինչև այժմ Հայրենի կառավարության կողմից վերանորգվել են Սահմանին ու Հաղբարը, Մարմաշենը, Կեշառիսը, Գոշականը և ուրիշներ:

Այս նույն գիտակցությամբ մերշնչված, մեր հայրենի պատմական մի շարք սրբավայրերի վերանորգության սրբազն աշխատանքին է ձեռնարկել նաև Մայր Արք Ս. Էջմիածինը, Տ. Տ. Կազգեն և Ա. Ամենայն Հայոց Կարաղիկոսի օրերին:

Արդարե, մեր պատմական սրբավայրերը վերաբարեվեր մտածումը, հնագույն հայ հարտարապետական ոնք և տեսքը պահպանելու նախանձախիսորությամբ, Վեհափառ Հայրապետի գործունեության և ծրագրերի մեջ կենտրոնական տեղ է գրավել, նրան զահակալության առաջին իսկ օրերից:

Մանոք է բռլորիս, թե Վեհափառ Հայրապետը ինչքան մեծ նշանակություն է տալիս պատմական մեր սրբավայրերի վերանորոգության այդ աշխատանքներին, այդ ծրագրերի իրազործումը համարելով իր Հայրապետության նիմնական առաքելություններից մերը:

Դեռևս 1955 թվականի դեկտեմբերի 1 թվականի Հայրապետական իր անդրանիկ կոնդակում, որը մի ամբողջական ծրագիր էր Նորին Ս. Օծուրյան ապագա գործումնեության, խոսելով պատմական վաճեցրի, եկեղեցիների, սրբավայրերի վերանորոգման աներածեցուրյան վրա, հավատով և լավագույթուրյամբ գեղուն, գրում էր. «ՊԻՏԻ ՏՔՆԻՆՔ ԱՊԱ ՎերԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԶԱՐՄԱՐԵԼՈՒ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ԽՆՉՈՒՄԻՍԻՆ ԵՆ Ս. ՀՈՒՓՈՒՄԵՆ, Ս. ԳԱՅՆԵՆ, ԽՈՐ ՎԻՐԱՊԸ, ՕՇԱԿԱՆԸ, ԴԵՂԱՐՄԻ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՍՅՈՒՆԵՐԻ ԿՀԱՆԴԻՍԱՆԱՆ ԵՎ ՀՈԳԱԿԱԾ ՍԱՀԱՐԵՆԵՐԸ ԱՂՈԹՔԻ ԵՎ ՈՒԽՏԻ ԵՎ ԶՄԱՅԼԵԼԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱԼՐԻ»:

Մեր եկեղեցին ու ժողովուրդը պետք է երախտագիտուրյամբ արձանագրին, որ Վեհափառ Հայրապետը, խոսից գործի անցնելով, 1956 թվից սկսել է այդ ծրագրի գործադրմանը և շարունակում է այն համար նետողականուրյամբ:

Ինչպես հայտնի է, Վեհափառ Հայրապետի գահակալուրյան հինգ տարիների ընթացքում, ավարտվել է արդեն հիմնական վերանորոգման թշնի եկեղեցու և Ս. Շողակարի պատմական վաճելի: Շուտով կալարտվեն հիմնական վերանորոգման մեջ Ս. Հոփիսինի, Ս. Գայանեի և Օշականի Ս. Մերուպ Մաշտոցի եկեղեցիների:

Առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում կիերանորդվեն նաև Ս. Գեղարդի, Խոր Վիրապի և Հաղարծինի վաճեցրեց: Առավելագույնը երկու տարուց հետո ամբողջովին կավարտվեն նաև Մայր Տաճարի վերանորոգման ու բարեզգությամբ: Ինչպես հայտնի է, Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքները սկսվել են 1954—1955 թվականից և շարունակվում են առանց ընդհատման մինչև այժմ:

Այստեղ մի անգամ ևս պետք է կարենուրյամբ ընդգծենք, որ վերոհիշյալ բոլոր վերանորոգումների ժամանակ, Վեհափառ Հայրապետի և Մայր Արքունի նարարապետական հանձնաժողովի շինարարական ծրագրերի մեջ առաջնորդող սկզբունք է դարձած հայկական ոնի հարազատ, հնագույն ձեւերը պահպանելու մտածումը:

Գոհունակուրյամբ պետք է արձանագրենք այստեղ նաև, որ հայկական հնագույն ոնի ձեւերը պահպանելու մտածումն ու մտահոգությունը, Վեհափառ Հայրապետի անմիջական ցուցմունքներով և հսկողուրյամբ, տարածում են կատարված աշխատանքների այլ մարզերի վրա ևս, աշխատանքներ, որոնք ծրագրվում են ի գործ են դրվում Մայր Արքունում:

Այս ուղղուրյամբ ևս նորին Ս. Օծուրյունը տանում է հնաւելողական աշխատանք: Հայկական եկեղեցական արվեստների հնագույն և վավերական ձեւերի, հարազատ ոնի պահպանումը հնաւագնդիում է նաև սրբանակարչուրյան և եկեղեցական հանդակարգությունը մեջ:

Որքան կարևոր է հայկական ոնի պահպանուրյամբ եկեղեցական հարարապետական կառուցվածքի տեսակետից, նույնին կարելու է հայ ոնի պահպանումը սրբանակարչուրյան և հանդակարգության և առնաւարակ եկեղեցական արվեստների բնագավառներում: Խոյնիսկ եկեղեցական սպասներ, խաչեր, ասեղնագործ ծածկոցներ, Ս. Սիրանի վարագուներ, անհրաժեշտ է որ կրեն հայկական ոնի կնիքը:

Մասնավոր ուղարուրյան արժանի է բնականարար սրբանակարչական արվեստի գործը, որը շատ դժվար իրազորելի ձեռնարկ է: Մեր եկեղեցիներում գործածված սրբանակարեները մեծ մասամբ, սկսած Ս. Էջմիածնի Մայր Տաճարից մինչև մեր արտասահմանի եկեղեցիները, չունեն հայկական ոնին համապատասխան գրոշմ: Մրանկարը, իր բովանդակուրյամբ, սերտուն պետք է կապվի եկեղեցական հարարապետուրյան ընդհանուր ոնի և առանձնահատկուրյունների հետ: Դրա համար էլ եկեղեցում կախված նկարը բավական չէ, որ ներկայացնի, օրինակ, Աստվածածնի սրբանակարը գեղեցիկ արվեստով, այլ այդ գեղեցկուրյունը Հայ եկեղեցու մեջ պետք է կրի դրոշմը հայկական կատարական արվեստի կերպի և հայ նոգու յուրահատուկ կրոնական զգայնուրյան: Եկեղեցում հավատացյալին չի կարող գոհացնել սրբանակարի լոկ բովանդակուրյունը, նույնին կարևոր և էական է, որ այդ բովանդակուրյան գեղարվեստական ներկայացնությունը իրականացնի յուրահատուկ տոնիմիկ ոնութ: Հայ եկեղեցում սրբանակարի գեղեցկուրյունը պետք է արտահայտվի հայկական ոնի կերպով, հայ հաշակով, հայկական հոգեբանուրյամբ: Մրանկարի մեջ պետք է կարգվի հայ արվեստի ոնքը:

Մեր օրերում, ստեղծագործելու համար հայկական սրբանակարչուրյան ոնի համաձայն, աներաժեշտ է, որ մեր հնարիշները ներշընչվեն հայ մանրանկարչական արվեստից, հայ

ին որմանկարներից, ժամանակակարգացման վարդապահ Ա. Սեղմանների դահան վարագացած Ա. Սեղմանների սեփական և առնասարակ հայ եկեղեցական արվեստի հնագույն հմուշներից:

Դեռևս 1957 թվականի հունիսի 11 թվականի երեսի նամակում, ուղղված Հայեալի Հայկական թարգմանական Ընդհանուր Միության «Մարտիրոս Սարյան» ակադեմիայի պատվարժան վարչության, Կենափառ Հայրապետը, անդրադառնախով վերաբիշյալ հարցերին, գրում էր. «Մենք զմենք պատրական կզգանք հոգածության և գուցգութանք ունենալ առնասարակ արվեստներու և ի մասնավորի սրբազն նկարչության և երաժրատուրյան նկատմամբ: Տարիներ առաջ, երբ տակապին ուսանող էինք, Բուքրեշի համալսարանի գրասեղմեներուն առջև, արվեստի խորհուրդներուն քափանցիկ կոորդինիք, և երբ, ավելի վերջը, հոգիոր հոչումի մը նետելով, սպասավորը դարձանք մեր փառապան Ա. Եկեղեցվո, նետզինտե Մեր մտածումի և մտատանջուրյան առարկան դարձավ մեր եկեղեցիներն ներս արվեստի հատարարության հասնալ նկարչություն ունենալու իդար: Պետք է խոսուովանինք դառնությամբ, որ մեր եկեղեցիներուն մեջ զետեղված ու հարգված գրեթե բոլոր սրբանկարները, ինչ բացառությամբ, շատ նեռու են հշմարիչ արվեստն և բոլորովին զուրկ հայկականութենք: Մենք արտասահման այ հիմարափուրյուն մը ունեցանք, տեսնելով, որ մշակույթի մեծ կերպներուն մեջ իսկ, հայ եկեղեցիներուն մեջ ունինք սրբանկարներ, որոնք պատիվ չեն բերե մեր եկեղեցիներ և Ազգին: Աստուծո ողբուրյամբ, ինչ ան ժամանակ, որ այս Ա. Արոնին վրա գտնվինք, Մեր շինարարական ծրագիրներուն մեջ կեդրանական տեղ մը պիտի գրավե սրբազն նկարչության հայկական ոն մը և դպրոց մը ստեղծելու իդար... Արդ, մեր առաջ դրված հարցն է, մեկնելով մեր ազգային մանրանկարչութենք, հորինել մեծ շափերու վրա սրբարկարներ, ըլլա եկեղեցիներու պատերու վրա (Փետսի), ըլլա յուղաներկ կտավի վրա: Անշուշտ դյուտին գործ չէ այդ, որովհետև պարզապես մանրանկարչության շափերը փո-

խելով, այսինքն մեծցնելով հարցը չի լուծվիր: Մենք կխսրակինք, թե ըղձալի արդյունքներու համեմու համար պետք կա երկարաւատ աշխատանքի, ներշնչումի և հշմարիչ տաղանդի: ...Այս համբով պետք է ընթանալ ամենայն լավատեսուրյամբ»:

Վեհափառ Հայրապետը բայլ առ բայլ նետապելում է եր այս մտածումների կենսագործումը այն անայլայլ լավատեսուրյամբ, թե այդ ուղղությամբ ի գործ դրված չափերը իրենց արդյունքները կտան առաջիկա տարիների ընթացքում:

Նույն սկզբունքով և ոգով առաջնորդված, Կենափառ Հայրապետը Մայր Արոռում հիմնել է հայ եկեղեցական արվեստի արվեստանցներ, որտեղ, ինչպես անցյալի մեր հին վանքերում, պատրաստվում են հայկական ոճով խաչքարեր, եկեղեցական սպաներ, բանանայական և վարդապետական լազարիաներ, ձեռաց խաչեր, վարագույրներ, եկեղեցական զգիստներ:

Մարգված է և պատվիրված հայկական ոճով 30 գորգերի պատրաստություններ՝ հատկապես Մայր Տաճարի գործածության համար:

Մեր գործաւար Հայրապետի բոլոր այս ձեռնարկները և մանավանդ եկեղեցական արվեստի վերաբերյալ ամեն գործի մեջ հայկական ոճի պահպանման կենտրոնական մտածումը մեզ բոլորին խանճաղվառում է և ոգեշնչում: Մենք մեզ զգում ենք մեր պապերի հոգու մքնարարի մեջ, երանց մտածումների և զգայնության մեջ, ասավածային զեղցկուրյանը ընկալելու և արտահայտելու երանց ապրումների կատարելու վրա:

Մեր եախնիք անհում զնիորությամբ կառուցել և մեզ ավանդ են բոլել պատմական այդ հուշարձանները, տաճարները և եկեղեցական արվեստի զմայինի հմուշները: Գործության դրանց վրա, պահելով դրանք որպես հայ ժողովրդի ստեղծագործ տաղանդի նվաճումները, հարազատությամբ գալիք սերունդներին փոխանցենք պատմական այդ կորողները, որոնցից յուրաքանչյուրի վրա կա հայ հանճարի անշնչելի շունչն ու կնիքը:



ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱԿՊԵՏԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ




ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԸ

ԿԱՌՈՒԻՑՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ ԵՎ ՊՌՈՉՅԱՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԴ ԴԱՐՈՒՄ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

ՍԵՐՀԱՐՈՒՄ ԱԴՐԵՏԱԿԱՆ ԿՈՔՈՂՆԵՐՈՅ



Բայութեան 1031 թվականին Գրիգոր ՍԱԿԻՄՅԱՆԻ ԿՐՈՆԻՑ

Խլաղը՝ Գրիգոր Ավազյան